ԱՆՅՈՒՐԴԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲՔԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՑՈՒՇԱՏԵՏՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ՉԱՐԵԱՆ

ՄԵԿՆՈՒՄ

Հոկտեմբեր, 1922·

Գալաթայի քարափի մօտ, մեզ տանող նաւը մխրճուել է լոյսերի մէջ: Վոսփորը հըմայիչ է սպանական սրբուհու նման: Ամէն ինչ շարժւում է: Մզկիթների ճեղքուած կողքից արիւնալի լոյսերի ջրվէժներ են վազում, ողողում կամուրջը, հայելիանում ջուրի վըրայ, բիւրեղեայ պատմուճանով պառկում տուների կատարին, զմրուխտի կոյտեր թափում պատուհաններից ներս, փոքրիկ հրդեհներ վառում բլուրների լանջքին, կանգ առնում օդի մէջ՝ ելեքտրական կայծեր արձակում ու հովի հետ սլանում դէպի հեռաւոր եղերքները:

Հովը ոսկէ խնձորներ է կախել: Փողոցների անկիւններից, կարմիր, կապոյտ, քըրքմազոյն, դեղնական հոսումներ են իջնում, մի վայրկեան կանգ առնում, ու հողի նման, ցորենի առպրակներից դուրս եկող փոշիների մտրակի տակ պտտում:

Նաւը աղմկալից է եւ տենդոտ: Օդի մէջ երկաթէ շղթաները ակռաներ են կռճոտում, վազելով գլորւում են վար եւ հառաչելով նորից բարձրանում:

Լեզուները խառնուել են: Նապոլիտէն բարբառը կոկորդային բաւականչութիւնների միջից, թաւ ջութակի մեղեդու նման երգում է:

Ծեր հրեաներ՝ Ռէմբրանդի շրջանակից պրծած անկարեւոր առարկաներ են առաջարկում եւ գիշատիչ աչքերով ճամբորդները պրպտում: Անատոլուցի թրքերը երկար փայտերի վրայ, լուսինների պէս, սիմիթներ են կախել: Ձիթապտուղի բլրակների շուրջ սեւ լոյսեր են պարում: Ձիերը ահագին բեռների տակ հեծում են: Տասնեակ կառքերից մտահոգ մարդիկ են իջնում: Կանայք, գլուխը կորցրած, պինդ սեղմում են իրենց ձեռքի պայուսակները եւ առաջնորդող տղամարդկանց շրթունքների շարժումներին հետեւում:

Ամբոխը, գայլի հոտ առած աչխարների նման, նաւից նաւ է անցնում: Տնային առարկաների կոյտերից աթոռների ոտքերը աղօթողի դիրքով դէպի երկինք են երկարում: Անկողինների վրայ փոքրիկ երախաներ են նստած՝ ճանճ են բռնում: Ամէն ինչ զարնւում եւ բախւում է: Մաստիկայի եւ թրիքի հոտ է գալիս: Պոռում են, աղաղակում են: Կառապանների մտրակները, ճառագայթներ են հընձում: Ձիերը կանգ են առնում եւ աղմկով միզում են:

Նաւը սուլում է:

Նաւը սուլումէ, եւ կեանքը դարձնում է մի նոր էջ:

Դրսում, յունարէն, հայերէն, թրքերէն, ֆրանսերէն, անգլերէն լեզուներով թերթերը վերջին հեռագիրներն են հաղորդում: Լոնտոնը շուարած է, Բէ տ'Օրսէն մութ խաղեր է խաղում, Հռոմը ուրախ է, Վիլհելմ շտրասսէն հրճւում է: Սոֆիայում նորից ռումբ են նետել: Միլանի ֆաշիստները սպառնում են Կապիտոլին: Դ'Անունցիոն ածականների դէզ է ժողովել Ֆիումէի ափերին: Պոլսում մի հայ կին փախել է արկածախնդիր մի դերասանի հետ: Մեծ աղմուկ: Ամէն ինչ ճարճատում է հիմից մինչեւ տանիք: Հայկական Բանկայի տնօրէնը անյայտացել է դրամների հետ: Կանայք եկեղեցիներում անէծք են կարդում, եւ քահանաները սկսել են հաւատալ:

* * *

— Հայաստան կ'երթա՞ս..ի՞նչ ըրած, լաւ կ'ընես, աղբար, լա՛ւ կընես...

— Ճանապարհին զգոյշ եղիր, Տրապիզոն չիջնես, քեմալականները գլխիդ խաղ կը խաղան:

— Եթէ լաւ է, գրիր· եթէ չեն սպաննում, չեն բանտարկում, գրիր, մենք էլ կը գանք...

— Անշուշտ օր մը ամէնքս ալ հոն պիտի ժողովինք:

— Հայրենիքի հողը համբուրիր...մնացել ենք շուարած...

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան